

## ՉՈՆ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ

### Նոթագիր

Մշտ դաշտից դեպի Բինգյոլ բարձրացող ճանապարհի վերջին ոլորանի վրա դադար առանք՝ մեկ անգամ է նայելու, ամբողջական գեսնելու հարթավայրը: Ներկան այսօրվա դաշտավայրն էր: Բայց Էղվարդ Խոլաթյանի համար Մշտ դաշտն այդ պահին իր խորքում երկրորդ պարկերն էր պահում՝ Էղվարդին գեսանելի, նրա հոգու ազքերով նայելի... Ու այդ պարկերների միջից՝ հեռվից, շաբախ հեռվից, միայն Էղվարդի համար լսվում էր պապի ձայնը. «Դրախսը թողինք, եկանք...»:

Էղվարդը մեկ անգամ արդեն հասցրել էր լինել Մշտ իր պապենական Շեղաղուր գյուղում, եղել էր ու սիրվը ճնշված վերադարձել: Սիրվը ճնշված, որովհեքու իր պապի գուն էր գնացել որպես հյուր, և այդ գանը գիրացած ինչոք մեկն իրեն ներս էր հրավիրել որպես օրարականի: Պապենական գունը գեսքով նույնն էր մնացել, օճորքն էլ, ծեղունն էլ նույնն էին, բայց շունչն ուրիշ էր, հոգն անգամ ուրիշ էր: Տոհմածառի հարզն իմացողը հայրական օշախի ծուխն անգամ փարբերում է՝ թոնիր վառողն ի՞ր գալուն էր, թե՛ այն քուրդ պառավը, որ լիքը թոռներով շրջապարված՝ եկվորին ներս էր հրավիրում. «Ճոգած եք, թան գրամ խմեք»:

«Մրանց համար ամեն հայի այցելություն միայն դա է նշանակում՝ ի՞նչ արմագներ, ի՞նչ գերդասպանի մասունքներ...»: Իր այս մփորումները Էղվարդը ուն մոփ բարձրածայներ՝ նրանք ի՞նչ պիտի հասկանային:

Դիմա, Բինգյոլի ճամփին, Մշտ դաշտի վերջին ծվենն ազքի առաջ, Էղվարդը վերիշում էր իր առաջին այցելությունը պապերի գուն, հիշում, թե ինչպես գունդարձին Վանաձորում մորը պարմում էր իր ուխտի մասին, պարմում երկար, ամենայն մանրամասներով, և այդ մանրամասն պարմեն ու մոր կողմից շարունակ գրվող հարցերը, փոքր-ինչ խաղաղեցրել էին իր խոռված հոգին:

«Այսպեղից Նեմրութ սարը թե երևար, մեկ-մեկ կնայեինք՝ կարովներս կառնեինք»: Առաջին օրվա գրույցի վերջում այսպես էր ասել մայր՝ հայացը հառելով Բազումի լեռնադժայի ամենաբարձր գագաթին: Տարօրինա՞կ ցանկություն էր, մփովին պապենական երկրի պարկերներով ապրողի հոգում անթեղված կարոսի՞ արփահայքություն էր, որ հաճախ, շաբ հաճախ իրեն զգացնել է գույս: Էղվարդը մոր այդ ցանկության մեջ ուրիշ մի պարկեր գեսավ, որ խենթ մի մրահղացման սկիզբը դարձավ: Զարմանք բան էր, թե ինչպես այդ ծրագիրը մարմին առավ՝ նախապիհ ունենալով իր մորը՝ դարձավ մայրության վիթխարի հուշարձան ծովի մակերևույթից 2707 մետր բարձրության լեռան վրա: Մայրը երազում էր Նեմրութը գետնել այսպեղից՝ Վանաձորից. անհնարին մի բան: Բաբելոնի աշբարակաշինարարությունը ծրագրողներն ու՞ր կամ ո՞ւ՞ն էին փորձում հասնել, այդ ձեռնարկումը նրանց մայրերի՞ ցանկությունն էր, թե՛ հենց իրենցը: Էղվարդն Ասֆծուն չէր ուզում հասնել՝ նա Ասֆծուն արդեն ուներ իր մեջ, և, ըստ Էղվարդի, մայրության փառաբանումն ինքնին Ասֆծու փառաբանումն է. «Ասպած ուրիշ գետապահ չունի երկրի վրա, բացի մորից»: Ձեւակերպեց այսպես և հավելեց.

- Նշանավոր մարդու, մփածողի կամ գիրքնականի սպորագրություն մի փնտրիր այս խոսքերի գույս, սա մայրասիրության, եթե կուգես՝ մայրապաշտության իմ պարկերացումն է, իմ համոզումը:

Կառուցվեց հուշարձանը (քանդակագործ՝ Ս. Ղարիբյան), որ գետանելի է ողջ Լոռվա աշխարհում: Նեմրութն, իհարկե, այսպեղից չի երևում, բայց այդ լեռը, այդ հուշարձանը ուխտագեղի է այլս, ուխտագեղի է ու մայրության ձռն, մայրության հանդեպ սեր ու գուրգուրանք առաջացնող կոթող, սրբավայր: Մոր կերպարը բարձրանում, վեհանում, փառաբանումն ինքնին Ասֆծու փառաբանումն է. «Ասպած ուրիշ գետապահ չունի երկրի վրա, բացի մորից»: Ձեւակերպեց այսպես և հավելեց.

- Այս, այդ լեռն այլևս սրբավայր է, և եթե որևէ մեկը կասկածում է, որ մայրը սուրբ է, այդ հուշարձանի հետք գործ չունի:

Իր պարմությունն այս խոսքերով ավարտեց Էղվարդ Խողաթյանը և զնաց դեպի մեքենան, որ հիմա Բինզյոլի ճանապարհը ավիտի բռնի:

*Ծարունակելի*